Եգիպտոսում ՀՀ դեսպան Կարեն Գրիգորյանի հարցազրույցը «Ալ-Ախբար» օրաթերթին

Հարց. Ի՞նչն էր վերջին շրջանում Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերի միջև բախումների պատճառը:

Կարեն Գրիգորյան. Հուլիսի 12-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ հարձակումը Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանից միակողմանի զիջումներ կորզելու փորձ էր: Կարծում եմ, որ մենք ցույց տվեցինք, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ունի միայն մեկ հանգուցալուծում, որը հիմնված է ներգրավված բոլոր կողմերի՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի կողմից փոխզիջումների սկզբունքի վրա:

Միանգամայն ակնհայտ է, որ Ադրբեջանի նման պահվածքը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ ներքին և արտաքին: Ադրբեջանի ղեկավարության համար փորձարկված գործելաոճ է, հասարակության ուշադրությունն ահռելի սոցիալական և տնտեսական խնդիրներից շեղելը՝ համավարակից, սոցիալական անարդարությունից, ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների խախտումներից և այլն: Կա ևս մեկ կարևոր հանգամանք, վերջին երկու տասնամյակների ընթացքում ադրբեջանական ղեկավարությունը սեփական հասարակությունը սնում է հակահայկական քարոզչությամբ: Հակահայկական քաղաքականությունը դարձել է Ադրբեջանի պետականության հիմնասյուներից մեկը: Հայի՝ որպես թշնամու կերպարը ներարկվում է Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացու մեջ ողջ կյանքի ընթացքում, սկսած մանկապարտեզից մինչև կրթական և ոչ միայն կրթական հաստատությունները: Հանրային ելույթները, ֆիլմերը, դասագրքերը, պատկերները, այն ամենն ինչն ունի պարտադիր բնույթ, պարունակում է հակահայկական տարր: Եվ այսօր ադրբեջանական իշխանությունները մի կողմից փորձում են օգտագործել հակահայկական քարոզչության արդյունքը, մյուս կողմից դարձել են դրա պատանդը: Ադրբեջանի բնակչությունը ցանկանում է տեսնել հսկայածավալ ռազմական ծախսերի արդյունքը և սեփական կառավարության ռազմաշունչ խոստումների իրականացումը: Ընդամենը օրեր առաջ Ադրբեջանի մայրաքաղաքում տեղի ունեցավ զանգվածային ցույց, որի ընթացքում հազարավոր երիտասարդ ցուցարարներ, հիասթափված ևս մեկ ռազմական ծախողումից, պահանջում էին պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Այսպիսով, արդեն հասարակական կարծիքը նույնպես դրդում է Ադրբեջանին ռազմական արկածախնդրությունների: Հիմնական արտաքին գործոնը, ինչպես նշել էի, Թուրքիայի ազդեցությունն է: Անշուշտ սա ամենակարևոր գործոնն է, առանց Թուրքիայի աջակցության Ադրբեջանը չէր համարձակվի գնալ իրավիճակի սրացման:

Հարց. Կան արդյո՞ք հրադադարի հաստատման կամ միջնորդության որևէ առաջարկություններ:

Կարեն Գրիգորյան. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը, որն ունի հայաբնակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև միջնորդական առաքելություն իրականացնելու միջազգայնորեն ճանաչված մանդատ, հրադադարի հաստատման բանակցությունների միակ հարթակն է Հայաստանի համար, քանի որ այն հանդիսանում է ԼՂ անվտանգության երաշխավորը: Հարկավոր է նշել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագները (ԱՄՆ, Ֆրանսիա և Ռուսաստան) կուտակել են միջնորդական առաքելություն իրականացնելու հսկայական փորձ՝ մի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի և մյուս կողմից Ադրբեջանի միջև:

ՀՀ արտաքին գործերի նախարարը, վարչապետի և պաշտպանության նախարարի հետ աշխատանքների համակարգմամբ, մշտական կապի մեջ է գտնվում ԵԱՀԿ ՄԽ համանախագահների, ինչպես նաև ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցչի հետ՝ ներկայացնելով իրավիճակը և էսկալացիայի հետևանքները:

Ներկայումս ադրբեջանական կողմը, հակադրվելով ԵԱՀԿ ՄԽ սադրիչ գործողություններից և բորբոքող հռետորաբանությունից զերծ մնալու և հրադադարը պահպանելու կոչերին, մշտապես դիմում է ուժի կիրառման սպառնալիքին և իրավիճակի լարվածությանը: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը շարունակաբար մերժում է Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում մշտադիտարկման մեխանիզմների տեղակայումը: Ինքներդ դատեք իրավիճակի մասին:

Մենք շարունակելու ենք աշխատել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ՝ հետապնդելով բացառապես խաղաղ ճանապարհով խնդրի լուծման նպատակը: Պատերազմը ճիշտ տարբերակ չէ:

Հարց. Ինչպիսի՞ն է հայկական կողմի գնահատականը Հայաստանի և Ադրբեջանի միջև բախումների վերաբերյալ Թուրքիայի հայտարարություններին:

Կարեն Գրիգորյան. Թուրքիան շարունակաբար խիստ բացասական դերակատարում է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում, պաշտպանելով ադրբեջանական իշխանությունների գործողությունները Հայաստանի հետ սահմանում և Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում իրավիճակի ապակայունացման ուղղությամբ: Թուրքական իշխանությունները, ներառյալ՝ նախագահը, արտաքին գործերի և ազգային պաշտպանության նախարարները, հրապարակել են մի շարք հայտարարություններ ադրբեջանական զինված ուժերի վերջին ռազմական սադրանքների վերաբերյալ: Արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ իր բոլոր միջոցներով շարունակելու է աջակցել Ադրբեջանին: Պաշտպանության նախարարությունն իր հերթին հաստատել է, որ Թուրքիան կշարունակի տրամադրել ողջ հնարավոր օժանդակությունը և աջակցությունն իր ամենից մերձավոր դաշնակից Ադրբեջանին Հայաստանի դեմ գործողություններում՝ «մեկ ժողովուրդ երկու պետություն» սկզբունքի հիման վրա: Հասկանալու համար, թե ինչ է կատարվում Հարավային Կովկասում, յուրաքանչյուրը պետք է մտապահի, որ Թուրքիան և Ադրբեջանը բոլոր ուղղություններով հանդես են գալիս գործողությունների սերտ համադրությամբ: Հայտարարությունները, ոչ միայն պարունակում են Ադրբեջանին անվերապահ աջակցություն, այլ նաև ցուցադրում են Հարավային Կովկասում Թուրքիայի բացահայտ հավակնությունները, ինչը Թուրքիայի նախագահը և այլ պաշտոնյաները փորձում են առարկայացնել՝ հղում կատարելով տարածաշրջանում Թուրքիայի «պատմական առաքելության» մտքին: Փաստն այն է, որ Թուրքիան սատարում է Ադրբեջանի արկածախնդիր ռազմատենչությանը: Հարևան տարածաշրջանների հակամարտություններում խառնակչությունները դարձել են թուրքական դիվանագիտության ավադական գործելաոճը: Շրջանառելով իր պատմական առաքելությունն ու էթնիկ կամ կրոնական կապվածությունը՝ Թուրքիան արդեն իսկ ապակայունացրել է իրավիճակը հարևան մի շարք տարածաշրջաններում՝ Մերձավոր Արևելք, Արևելյան Միջերկրական և Հյուսիսային Աֆրիկա՝ անասելի տառապանքներ պատճառելով այդ շրջաններում բնակվող ժողովուրդներին:

Ավելին, Թուրքիայի սադրիչ և կողմնակալ կեցվածքը լրջորեն խաթարում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը և հաստատում է, որ Թուրքիան չի կարող ներգրավվել խնդրի կարգավորմանն ուղղված որևէ միջազգային նախաձեռնության՝ հատկապես և առաջին հերթին ԵԱՀԿ շրջանակներում:

Հայաստանը խստորեն դատապարտում է մեր տարածաշրջանում անկայունության սփռման թուրքական փորձերը և հաստատում է, որ շարունակելու է միջազգային և տարածաշրջանային խաղաղության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված կառուցողական աշխատանքները, այս ուղղությամբ սերտորեն համագործակցելով միջազգային գործընկերների հետ:

Հարց. Համարու՞մ եք Թուրքիայի հայտարարությունները որպես պատասխան հայերի բնաջնջման ճանաչման գործում ԱՄՆ, Ֆրանսիայում և այլ երկրներում Հայաստանի արձանագրած հաջողությունների արդյունք:

Կարեն Գրիգորյան. Վստահ եմ, որ խնդիրն ավելի տարողունակ է, և թուրքական թշնամական վերաբերմունքը ոչ թե ընդամենը վերաբերմունք է այս կամ այն երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Հայկական պետականության պարագայում թուրքական թշնամական քաղաքականությունն ունի այլ հիմքեր: Չնայած երկու երկրների միջև հարաբերությունները կարգավորելու Հայաստանի փորձերին, դիվանագիտական հարաբերություններ հաստատված չեն և Հայաստանի ապօրինի շրջափակումը դեռ շարունակվում է: Եվ այսօր՝ 21-րդ դարում, թուրքական ղեկավարությունը մեր տարածաշրջանում կառուցում է իր քաղաքականությունը Ադրբեջանի հետ ազգակցության, Հայոց ցեղասպանության արդարացման և հանցագործության անպատժելիության ավանդույթներով: Ցավալիորեն հակահայկական քաղաքականությունն ակնհայտորեն թուրք-ադրբեջանական համատեղ ռազմավարական աշխարհընկալման մասն է: Անդրադառնալով տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, նշեմ որ դա բնականոն և կարևոր գործընթաց է, ինչը գնահատվում է ոչ միայն Հայաստանի, այլ ողջ քաղաքակիրթ աշխարհի կողմից: Ցեղասպանության ճանաչումը ապագա ցեղասպանությունների կանխարգելումն է: Իհարկե, Թուրքիան հակադարձում է ճանաչման յուրաքանչյուր դեպքի, քանի որ այն ցնցում է թուրքական պետականության հիմքերը, որը հեղեղված է արյամբ:

Հարց. Արդյո՞ք փաստվել է Հայաստանի հետ հակամարտությունը թեժացնելու համար թուրքական ռազմական օժանդակությունը Ադրբեջանին:

Կարեն Գրիգորյան. Այո, մենք ունենք փաստեր և դա մեկանգամյա աջակցություն չէ: Ադրբեջանի և Թուրքիայի միջև լիակատար ռազմական համագործակցության գոյությունն անհերքելի փաստ է: Այս առումով, ես կցանկանայի վերադառնալ այսպես կոչված «պատմական առաքելությանը» տարածաշրջանում: Ի՞նչ է դա նշանակում Հայաստանի համար: Շատ պարզ է: Հաշվի առնելով պատմության դասերը՝ Հայոց ցեղասպանությունը, 1918-20թթ. ընթացքում Հայաստանի Առաջին հանրապետության դեմ պատերազմները, Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հայկական տարածքներ ներխուժման չիրականացված ծրագրերը, և այսօրվա իրողությունը՝ տնտեսական շրջափակումը, Ադրբեջանին անվերապահ աջակցությունը, թուրքական «պատմական առաքելության» իրականացումը նշանակում է հայկական պետականության և հայ ժողովրդի ոչնչացում:

Հարց. Լրատվամիջոցները նշում են, որ Թուրքիայի աջակցությունն Ադրբեջանին կապված է Ռուսաստանի հետ որոշ հարցերում նրա անհամաձայնության հետ, հատկապես, որ Ռուսաստանը և Հայաստանը կապված են բազմաթիվ տնտեսական, քաղաքական, ռազմական համաձայնագրերով: Ինչպե՞ս դա կմեկնաբանեք:

Կարեն Գրիգորյան. Իհարկե, մենք չենք կարող քննարկել տարածաշրջանային զարգացումներն առանց ուշադրություն դարձնելու միջազգային իրադրությանը: Ռուսաստանը Հայաստանի սերտագույն դաշնակիցն է, ավանդական դաշնակիցը, որն ունի շատ ծանր և բարդ հարաբերությունների պատմություն Թուրքիայի հետ: Վերջին

տարիներին Անկարայի ծավալապաշտական քաղաքականությունը ցույց է տալիս, որ Թուրքիան օգտագործում է յուրաքանչյուր գործիք, յուրաքանչյուր առիթ, տարածելու իր ազդեցությունը՝ կարծես փորձելով վերականգնել Օսմանյան կայսրությունը: Ակնհայտ է, որ թուրքական ղեկավարության քաղաքականությունը, որը սպառնում է Մերձավոր Արևելքին, Արևելյան Միջերկրականին, Հյուսիսային Աֆրիկային և Հարավային Կովկասին, հաճախ կոչվում է նեոօսմանիզմ:

Հարց. Հակադրվում են արդյո՞ք Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վերահսկողություն սահմանելուն ուղղված Ադրբեջանի փորձերը տեղի բնակչության ցանկություններին:

Կարեն Գրիգորյան. Կցանկայի նշել, որ Լեռնային Ղարաբաղը տարածք չէ, այլ անկախ երկիր՝ պետության համար բոլոր կենսական ատրիբուտներով՝ բնակչություն, տարածք, կառավարություն և ինքնիշխանություն: Արցախ անունով այս շրջանը կազմել է պատմական Հայաստանի մի մասը՝ այն պատմական Հայաստանի 10-րդ նահանգն էր: Հայերը Լեռնային Ղարաբաղի տարածքում բնակվում են ավելի քան 2500 տարի: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներկա փուլը սկսվել է 1980-ականների վերջին, երբ ադրբեջանական իշխանությունները նպատակադրվեցին դուրս մղել շրջանում մեծամասնություն կազմող հայկական ազգաբնակչությանը: Նույնիսկ, մինչ այդ՝ ողջ խորհրդային շրջանում Ադրբեջանը կիրառել է հայերի տեղահանության քաղաքականություն Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից և Լեռնային Ղարաբաղից: Առաջինի դեպքում դա հաջողվեց, մյուսի դեպքում՝ ձախողվեց: Կարևոր է արձանագրել, որ նախքան Խորհրդային միության փլուզումը, 1991թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հանրաքվեի միջոցով հռչակել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապատությունը, ինչը լիովին համապատասխանել էր այն ժամանակվա ԽՍՀՄ սահմանադրության տառին և ոգուն: Այսպիսով Խորհրդային Ադրբեջանի տարածքում ստեղծվել էին երկու հավասարազոր պետական միավորներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի բնակչության հստակ ցանկությունն արտահայտվել է վերը նշված հանրաքվեի միջոցով: Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև պատերազմը բռնկվեց ադրբեջանական իշխանությունների պատերազմելու որոշմամբ: Այսօր Լեռնային Ղարաբաղի բնակչությունը համոզված է, որ այն օրը երբ Ադրբեջանը հսկողություն կսահմանի իրենց երկրի վրա, նրանք կկորցնեն ամեն ինչ, ընդհուպ՝ կյանքը: Չկա այլ տարբերակ, քան պաշտպանել ազատությունը:

Հարց. Ադրբեջանի հետ բախումների կապակցությամբ ի՞նչ աջակցություն է ակնկալում Հայաստանն իր միջազգային բարեկամներից, այդ թվում նաև Եգիպտոսից:

Կարեն Գրիգորյան. Մենք ունենք պաշտպանվելու սեփական հնարավորությունները: Հայաստանը հանդիսանում է նաև ՀԱՊԿ անդամ, տեղին է նշել նաև ՆԱՏՕ և շատ այլ գործընկերների հետ համագործակցությունը: Հայաստանը բավականին գործընկերներ ունի միջազգային հանրության շրջանում և իհարկե Եգիպտոսը կարևոր բարեկամներից է: Մենք շնորհակալ ենք բոլոր բարեկամներից և գործընկերներից աջակցության և համագործակցության համար:

Հարց. Ի՞նչ դերակատարում ունեն եգիպտահայերը Եգիպտոսի և Հայաստանի միջև հարաբերությունների ամրապնդման գործում:

Կարեն Գրիգորյան. Եգիպտոսի հայկական համայնքը գոյություն ունի դարեր շարունակ: Հայոց ցեղասպանությունից հետո Եգիպտոսը նոր հայրենիք դարձավ հազարավոր հայերի համար, որոնց հաջողվել էր վերապրել արհավիրքը: Եգիպտոսի հյուրընկալությունը և եգիպտական հողում հայերի կառուցողական դերակատարումը

միահյուսել են մեր ժողովուրդների ճակատագրերը: Նույնիսկ այսօր՝ թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, հայկական համայնքը վստահելի միջնորդ է հայ-եգիպտական հարաբերություններում: Սա մի կապ է, որը տնտեսապես և մշակութային առումով հարստացնում է Հայաստանը և Եգիպտոսը: